

ՊԱՅՆ

Հայրենեաց

ՇԱՐԱԹ-ՍՈՒՆԻԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



WAZAİN
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

AMERICAN HAY PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second - Class
Mail Matter.

Subscription \$1.80 a Year.

«Ձե՛ք Գիտցե՛ք ՈՐԸ Ի՛նչ ՊՐՏԻ ԾՆԱՆԻ»

Կրկին մտած ենք ահաւոր անակոչ-
կալներու մի ինչ նկուզին մէջ ու կեր-
թանք: Չենք գիտեր յարող քայլին ինչ
բանի պիտի պատահիք. չենք գիտեր
վաղը ինչ պիտի ծնանի: Յղութիւնն
ընն են, սակայն, որ կը ծնանի. պա-
րագութենէն արգասիք չըլլեր: Ձինա-
կան այս ահաբեկի պատմարութիւնը
ներկայ դարհուրելի պատերազմը ընդ-
դէմ համայն քաղաքակիրթ աշխարհի
մանկացու յղացումէ մը որ այդ անսահ
ման պետութեան արգանդին մէջ գո-
յութիւն առած էր ու կը սնանէր երկար
տարիներէ ի վեր:

Ամէն ծնունդ ծագում կուտայ ու-
րիշ յղացումի մը և ամէն յղացումէ յա-
ռաջ կուգայ նոր ծնունդ. ու շղթան այս
պէս կը շարունակուի դէպի անձնութիւն:
Եւրոպական Սպինդրին մարմարեայ
դէմքը քիչ քիչ արտայայտ կը սկսի. վա-
ղուան համար գուշակութիւններ կը յը-
շոյլին Բրիտանական դահլիճէն: «Պատե-
րազմը պիտի ծաւալի Ձինական սահ-
մաններէն դուրս», կըսուի, ուրիշ մի
նախկան պատերազմէն պիտի ծնանի հա-
մախարհային պատերազմ: Ու դեռ ան-
կէ ինչե՛ր պիտի ծնանի. ո՞րքան պիտի
տարածուի «համաշխարհային» կոչուած
պատերազմը, ո՞ւր կանգ պիտի առնէ.
ինչպէս պիտի վերջանայ. այդ սուսկալի
արիւնհոգութիւնը ինչ եղբակացութեան
պիտի հանգի. ինչ պիտի ըլլայ անոր վեր-
ջին ծնունդը: Ահա անակոչակներու շղ-
թային օղակները որ պահուած են վա-
ղուան մէջ ու օր ըստ օրէ դուրս պիտի
գան:

Դեռ երէկ էր որ Հայկական հարցը
կրկին երևան կուգար բոլորովին նոր ե-

րևոյթներով: Ռուսիա սկսած էր Հայ-
կական գաւառներու մէջ տիրող թշու-
առութիւններուն վրայ Դրան ուղարկու-
թիւնը հրաւիրել և անոնց դարձնուած
մասին սպառնալից պահանջներ ներ-
կայացուցել, այդ յուստու անակոչա-
լէն ուրիշ անկոչութիւններու յառած
էինք աչքերնիս և ահա յառաջ եկաւ Ձի-
նական պայթումը:

Դեռ ուրիշ ի՛նչ յղութիւններ կան
ու ինչե՛ր պիտի ծնանի վաղը:
ՆՆՇՆՆՆ ՌԻՎԻՒԻՄԵՆ Թրանսպիտանի-
նական արածի մը մէջ յօդուած երեցաւ
վերջերս, որը հաստատ փաստերու վրայ
հիմնուած կապացուցանէ թէ, Յրանսա-
կան նոր յեղափոխութիւն մը ամէն կեր-
պով կազմ աւ ստեղծ վրայ է, որը ի հան-
դէս գալու համար մի միայն արուեստա-
հանդիսին փակուելուն կուտայ:

Տրէյֆիլդերն ինչպէս ասին այս յե-
ղափոխական դաւադրութեանց վրայէն
վարագոյրը կը բացուէր ու կը գոցուէր
ոչ մէկը համարձակութիւն կունենար
չիտակ այդ զարհուրելի տեսլիքին նայե-
լու: Փօլ Տէրուլէտի և ընկերներուն դա-
տավարութեան մէջ Յրանսայի աչքերը
կրկին հանդիպեցան գալիքին. անկէ աչք
գոցել սիրեցին. այդ աղետալի յղացու-
մը կը բարձրանար սակայն, վարագոյրը
կրկին ու կրկին կը բացուէր. մէկ կող-
մէն արուեստահանդէսը կը սանձաւա-
րէր ներքին բարեբու մը՝ միւս կողմէն
կիրքերը կը շարժէին: Չօր. կալիֆէյի հրա-
ժարիւր այս ներքին անհանգստութեանց
հետևանքն էր:

Այս մտաւորուտ յեղափոխութիւնը
կազմող տարրերն են կղերականութիւնը,
«Ազգայնականը», «Արքայականը», «Հա-
կասեմականը» և բանակին մեծ մասը:

Թէ այս յիշեալներէն առաջնոյն ազդե-
ցութիւնը ի՛նչ ահագին համեմատու-
թիւններու հասեր է Յրանսայի մէջ,
յայտնի եղաւ վերջին ընտրութիւններէն.
ու երբ ասոնք ձեռք ձեռքի կուտան ու
կը շարժին, ո՞վ կամ ի՛նչ բան կարող
պիտի ըլլայ կանգնել այդ ահարկու Հե-
ղեղին առջև:

Սոսկ գուշակութիւն չէ որ կընէ Հե-
ղեղինը, այլ կ'եղբակացունէ որոշ իր-
դութիւններու վրայ կոթնած. որոնք
մակերեսը ելած են ստեանի առջև ե-
ղած դատաւարութիւններէն. ընկերու-
թեան անհերքելի վաւերագրերէն որք
վաւերութիւն մէջ ձեռք բերուեցան, և վա-
նականներու հարցաբնութեանց ատեն
ըրած յայտնութիւններէն՝ թէ երբման
տակ ի՛նչ հրահանգներ ու պատուէրներ
տրուած են իրենց:

Ձինական ներկայ պատերազմէն, Յր-
անսական ապագայ յեղափոխութեանց
մէջէն կամ միւսէն կրնան համաշխարհ-
ային հետևանքներ յառաջ գալ որք կար-
ելի է չէ որ անցին առանց վեճական փո-
փոխութիւն բերելու հայրենու ու Հայ-
աստանի մասին ալ:

Ու ի՛նչ ըրած ենք. ի՛նչ կընենք կամ
ինչ ընելու կարող ենք մենք Հայերս՝
մեր ալ ձայնը խառնելու դատավճռին
մէջ որ պիտի տրուի վաղը Հայկական
հարցին նկատմամբ: Չենք գիտեր թէ
օրը ինչ պիտի ծնանի մեզի համար,
սակայն մեր ազգային անկախութեանց
արգանդին մէջ ի՛նչ ազգային հեղինա-
կութիւն, կամքի, ուժի և գործունէ-
ութեան ի՛նչ հղացումն ունինք. որ ի-
րաւունք տայ մեզի նպաստաւոր ծնուն-
դի մը սպասելու այն մեծ արիւն հեղու-
թեանց, աշխարհի ահեղ երկունքին օրը:

Ո՞վ ունինք, ո՞ր ազգային մարմինը
կայ որ ազգային բոլոր հնարաւորութիւն
ները իր ձեռքին տակ առած՝ Հայրեն-
եաց պահպան հրեշտակին պէս անբու-
կը հսկէ, կը զիտէ պատահութիւննե-
րը. կը նայի սպառնալիքներուն, և մեր
յոյսերու նաւը յոյգերու ու վիթխանութեան
դէպի նաւահանգիստը առաջնորդելու հա-
մար կը գործածէ ամէն միջոց ամէն կա-
րելիութիւն որ հայութիւնը ունի իր մէջ:
Ունինք հայութեան սիրաբ, միաբը,
բացուկը և քսակը ներկայացուցող մար-
մին մը. ու այն այ ազատ ու անկալ-
կանը դիքի մէջ:

Անհնարը չէ որ կը պահանջենք. մեր
գոյութենէն դուրս բանի չէ որ կը ձգ-
տինք: Ինչ որ ունինք գայն գործածե-
լու վիճակին մէջ ենք իրր ազգ: Ինք-
զինքնիս ազգ կը կոչենք. ո՞րն է այն
ազգապահպան մարմինը որ ազգին ու-
ղեղի տեղ ծառայէ. որուն առողջ և ա-
զատ հրահանգներովը շարժին, ի գործ
մղուին ազգային հնարաւորութիւնները:
Չենք գիտեր օրը ինչ պիտի ծնանի. ազ-
գին մահը ամէն օր աւելի վճռական
քայլերով կը մօտենայ, օրը նոր աղէտը
նոր, ցաւը նոր... ահաբեկոյն օրուան
նախազգացումը ունինք. դժբախդ ենք,
բայց ոչ այնքան տ՛որ համար որ քիւրտը
անողոք. թիւրքը անգութ, Սուլթանը
ոխերիմ է ու Եւրոպա անտարբեր. որքան
այնու որ նոյն իսկ մեր հարազատ միջոց-
ները յօգուտ մեր գործածելու. մեր
իսկ ներքին հնարաւորութիւնները դուրս
բերելու, կրցանին ընել տալու պատ-
րաստ ազգային մարմին մը չունինք. մե-
ռելի հող ցանուած է ազգին վրայ ու
դեռ կը հարցունենք, օրը ի՛նչ պիտի ծը-
նանի... կը մօտենայ մեծ շարիքին օրը:
Ի՛նչ ընենք:

Գ. Պ. Չիթճեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՔՈՒՄՈՒԹԻՒՆ

Քաղաքական յեղափոխութիւններ
երկար ժամանակէ ի վեր տեղի կունենա-
լին Անգլիոյ մէջ երբ Եւրոպայի ցամա-
քին վրայ բացարձակ միապետութիւնը
կիշխէր միակեան. 13րդ դարուն Անգ-
լիացի ազնուականներ եւ կրօնաւորներ
միացած թագաւորէն բռնի առին մեծ
սահմանադրութիւնը որոյ համաձայն թա-
գաւորը իր հպատակներէն զբաւ կըր-
նար ստանալ միայն այն ստան երբ այն
գումարը քուէարկուէր որոշ հանրային
նպատակի մը համար. երկրորդ, թագա-
ւորը անկարող պիտի լինէր իր հպատակ
ները ուղղածին պէս պատժել կամ բան-
տարկել առանց օրինաւոր դատարանի,
այս երկու օրէնքները որ Անգլիական ա-
զատութեան հիմնաքարերն են, այն հին
ժամանակէն անձ և ստացուածք ապա-
հովեցին արքայական քմահանգքէն: Անգ-
լիան իր աշխարհագրական դիրքին շը-
նորհիւ աւելի կանուխ կրցաւ քաղաքա-
կան ազատութիւններ ձեռք բերել: Բը-
րիտանական ջրանցքը զբացի պետութեան
մը յարձակումին դէմ ամենէն լաւ պաշտ-
պանութիւնն էր, թագաւորը երկրին

համար անհրաժեշտ չէ կրցած ընել մնա-
յուն մեծ բանակ և առանց բանակի թա-
գաւորներ անդոր են ինչպէս օճը ստանց
թոյնի: Այս է պատճառը որ Անգլիական
պատմութեան մէջ արտաքին պատե-
րազմներէ աւելի մեծ անդ կը բռնեն
բարրամէթներու կոնքեր, քաղաքա-
կան և կուսակցական վէճեր ու պատե-
րազմներ դարբերով տեւած են: Քանի ան-
գամներ Բարրամէթներ լուծուեցան սահ-
մանադրութիւնը անվաւեր և անգործա-
ղբիլի հոչակուեցաւ, բայց այդ բոլոր
փոթորիկներու մէջ ազատութեան դա-
ղափարը, քաղաքական հաւասարութեան
սկզբունքը չմեռաւ: Թագաւորներու ա-
մենէն մեծ բռնութեան օրերն այդ
ազդանի զօրութիւնը հրաբուցի պէս
պայթեցաւ, ինչպէս 1649 ին և 1688 ին
առաջին անգամին կարողու Ար զլուխը
և երկրորդին ձէյմըս Բ. իր գահը կոր-
սնցուց: Ինչ որ ալ լինին Բրոմուէլի
կրօնական քաղաքականութիւն եւ անձնա-
կան շարժառիթներու վրայ պատմիչնե-
րու կարծիքը, սա պատմական իրողու-
թիւն մը է թէ յեղափոխական զօրապե-
տը իր եռանդուն բանակով եւ յարա-
տմ. քաղաքականութեան ոչ թէ Անգլիոյ անու-
նը միայն բարձրացուց, այլ մարդկային

ազատութեան դատին ամենէն հզօր
նպաստողներէն մին եղաւ: Յեղափո-
խութիւնը նուիրագործեց սահմանադր-
ութիւնը եւ հասկցուց Բրիտանական
գահին վրայ բացմող բոլոր յարող թա-
գակիրներուն թէ իրենց գահը հաստատ
պահելու միակ պահով եղանակը ժո-
ղովրդի իրաւունքը յարգելն է: Ասկից
զատ, յեղափոխական շարժումը նեղ
սահմաններու մէջ չմնաց, անցաւ ցամա-
քը հոն միաբեր յուզեց, յոյսեր ու փա-
փաքներ ներշնչեց և դարձր վերջ երբ
ժամանակը եկաւ Յրանսական մեծ յե-
ղափոխութեան Անգլիոյ քաղաքական
կազմակերպութիւնը Յրանսայի յեղա-
փոխութիւնը պարաստողներու ներշնչ-
չումը եղաւ, Բրոմուէլի օրինակը
ազատութեան կուր մղողներու ոգի եւ
քաջութիւն ստաւ:

Յրանսական յեղափոխութիւնը կըր-
դի մը մէջ չէր կատարուէր: Փարիզը
երկար ատենէ ի վեր աշխարհի թատե-
րաբեմը եղած է, հոն կատարուած աղ-
բաման միջազգային, համաշխարհա-
կան երևոյթ կառնէ որքան ալ որ ազ-
գային կամ Յրանսական լինի: Զարմա-
նալի չէ ուրեմն որ 1789 ի յեղափոխու-

"A LOST ART."

Անունն է այս գրքային՝ որուն երեւումը մեծ գովեստով հռչակուեցաւ անգլիական մամուլին կողմէն. կը խօսի Արեւելեան Գորգերու վրայ ընդհանուր կերպով, ինչպէս նաև առանձին առանձին կը բացատրէ զանազան անուններով ճանչցուած գորգերը: Ամենայն դարձեալ ընծայուած են Ամերիկացի բարեկամաց, որոնք Արեւելեան գորգեր ունին իրենց տուներու մէջ:

Գինը 30 ռէնթ
Դիմել Հեղինակի Հասցէին.
ARDASHES H. KELEIAN,
With L. S. Ayres & Co.,
Indianapolis, Ind.

Տէր.

Կը փութանք ծանուցանել թէ քիչ ժամանակէն պիտի հրատարակուի Համալսարանի Երգ. Թիւր, որ ուշացած է Երգ. Թիւրին հետ միացած:

Այդ գոյք թիւին մէջ, ամբողջ պըրակ մը յատկացուած է Փարիզի Արուեստական դպրոցին, որուն զիջումը շէնքերէն և տեսարաններէն 12 շքեղ նկարներ զետեղուած են ընդ:

Ուրախութեամբ կը յայտարարենք նաև որ յաջողած ենք Փարիզի մէջ բաւալ սեպակական տպարան մը, ուր Ա. պիտի տպագրուի «Գիտական եւ Գրական Հանդէսը» եւ Բ. պիտի կատարուին Հայերէն, Ֆրանսերէն և օտար լեզուներով ամէն տեսակ տպարանական աշխատութիւններ խիստ չափաւոր գիներով:

Կը խնդրենք, հաճեցէք հրատարակել այս տեղեկութիւնները, որոնք Հայ Հասարակութեան պիտի ներշնչեն ամէն բանէ առաջ՝ վստահութիւն զէպի Համալսարանի յարատեւ հրատարակութիւնը:

Ընդունեցէք մեր յարգանքները:
Տնօրէն-Խմբագիրներ
Մ. Պաղտասարեան և Յովհ. Եւաւրշ
HAMALSARAN,
4, rue Ortolan 4, (Place Monge)
Paris.

Ա. Ջ. Գ.

Նիւ-Եորքի Հայ. Մարդ. Կաճառը իւր Ուէսթ Հոպքոբէնի մասնաճիւղով միասին միանալով Փարիզի Հայ. Գաղթ Միութեան հետ. մեծ դաշտային հանդէս մը պիտի տան Սեպ. 16 ին կիրակի օր ի միասին Բարք. Ուէսթ Հոպքոբէն: Յանձնարումը:

Գ. Ր. Ս. Ո. Ի.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
«Ազգայնոց մէջ ընթերցանութիւն տարածել» Գրադարանին նպատակը լինելով, ի գիտութիւն նոր կարգալ (և մասնաւորապէս անոնց որ չ'կրցինք զրկել զբարեբեր. մեր քով սպասած ըլլաւուն Համար) սովորողներու կը յայտարարենք թէ՛ նոր ստացրու կը վաճառենք. Ընթերցարան (Մամուլեան) նոր ընթերցարան (Պոնտուֆեանի) Մանկական Պարտեզ (Պաշտպանի) Մայրենի դպրոց (Ա. տարի) և Արեւնարան:

Նաև կը վաճառէ՛ Ազգային Երգարան՝ Հայկական Ձիւնանշան, Հին և Նոր Արանց, Սասնոյ և Կ. Պօլսոյ շարքերու լուսանկարները: — Կանխիկ վճարելի:
Դիմել՝ Վարչութեան Հետեւեալ Հասցէով:
ARM. LIBRARY,
63 Laurel Street,
Worcester, Mass.

Կ. Ը. Ֆ. Տ. Ո. Ի.

Կիրակի Գ. Ս. Սիւնիի Հասցէն գիտցողները թող հաճին հարգելի մեզ յիշեալը այժմ Նիւ Եորքի շրջակայքերը խաւի գործով կը զբաղին:

Գ. Պ. Պ. Պ. Պ.

37 Ուաշինկթըն Փողոց
Ն. Ե. Սիթի
Անձնական և Եւրոպայի Գործ
Վեց տարիներէ ի վեր շարունակած փայտի գործս կը ծախեմ խիստ յարմար և զիւրաւարտ զնով, գործանոցս կը գտնուի 391 Փաստեթէյն փողոց Փրոպիտէնս:

Աւելորդ է ըսել թէ անձնական գործի փափաքողներու համար Հազուադէպ պատահութիւն է:
Դիմել առ
Ահարոն Իշխանեան

Ա. Ջ. Գ.

Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պոսթինի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍԿԱՆԱՋ

Մեր Հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուլեանի և Տիպի Րաֆֆիի հետ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատեսչներէ ալ զբրբեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ զբարեբեր Հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանք շարք մը:

Փափաքողաց գրացուցակ կը շարունակուի: Մեծ քանակութեամբ գրեանքներու՝ մասնաւոր գնով կը ընդունուի:
Դիմել Ն. Պ. Պ. Պ. Պ.
390 P O Box
LOWELL MASS

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿ

Մէկ կամ երկու անձերու համար գիմել նպարավաճառ Վ. Յ. Բարակեանի
45 EXCHANGE STREET,
Worcester, Mass.

Ա. Ջ. Գ.

Պոտոսի եւ շրջակայքերը գտնուող Հայ Երիտասարդութիւնը նախաձեռնարկած է նուագաձու խմբի մը հաստատութիւնը:

Վարչութիւնը հրաւեր կը կարգալ այն ամէն երիտասարդներուն, որոնք փափաք ունին գալ մեզի միանալ:
Անոնք կրնան մեզի միանալ երբ իրենք հաստատակամութիւն ունին, կանոնաւոր շարունակել և յարատեւ մնալ խմբիս անդամ:


Ի դիմաց Վարչութեան (Նուագաձու խմբին)
A. MUGRDICHIAN,
HOOD RUBBER CO.,
East Watertown, Mass.

Թ. Բ. Ա. Կ. Ա.

Մարտու Բաղնիք
Աւելի ընդարձակ գործի մը ձեռնարկելու նպատակաւ որոշած եմ ծախել թրքական բաղնիքս. որուն մէջ կը պարունակեն շաւուր և թրք բաղնիքներ, ինչպէս նաև շոգեռան և գուրնաներ ինչպէս նաև թրքիչ փարթ մը:
Բազմաթիւ յանձնարողներ ունիմ խիստ շահաւոր գործ մ'է գիւրամատչելի գնով մը պիտի ծախեմ:
Դիմել Փիթր Քուրի.
593 Spring St.,
West Hoboken,
N. J.

231 Իսթ 28 րդ. Փողոց
Նիւ-Եորք

Մ. Գաղանձեան և Պ. Մուշեղեան:
Կը վաճառենք տեղական ու արեւելեան ամէն տեսակ նպարեղէններ. Հօլսթիլ գնով. Դիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ: շուտով կը զրկենք ուր որ ուզուի:
Ահա մեր գններուն ցանկը իւրաքանչիւր փառնա սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուստրի պոչիլոյ շատ մաքուր 3 1/2. Հայկական պանիր 10. Լօքուս շեքերի 10. Եամ ֆուտի 26. Պամեայ 28. Զերմակ ֆասիլայ 5. Նուշ 18. Չամիչ 8. Սալոր 5. Նայսի 15. Ընկոյզ 14. Ֆետի 13. Ուստրի 5. Լիպիպու շաքար 20. Հին 50 Տաճկական սօր 7. Սիւսա 5. Գառնի միտ տեղս մորթուած 7. Նայսերի պատրմայ և Մուճուր 35. Թէ ալի և Թէ անի լիպ լիպու 15. Լիպիպուին ամենալաւ 28. սէնթ ամէն մէկ փառնուրը: Ունինք նաև Քիմիոն. Չաման. Տարչին. Լիմոն թուզի և տեղական ապրանք ամէն տեսակը:



THOMAJANIAN BROTHERS,
52 Southbridge St.,
Worcester, Mass.

Ամերիկայի Հայ գաղթականութեան կուգամք յայտարարել, ամէն դիւրութեամբ կը ընծայենք նաև երու տոմսակ նալու մասին. դէպի թուրքի կամ եւրոպայ. մասնաւորապէս կը յանձնարարեմք (Յորէն Հայն) կողմէն գիծն որ ամենապատուական և ամենաարագ նաւերը ունի և ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կը ընդհն Նիւ-Եորքէն: Նաև դրամ կը փոխադրենք Մարսէյլ հեռագրաւ թէ նամակաւ. նոյնպէս Եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքները, որք կը զանաւորուին առանց որ և է ծախուց և դժուարութեանց. մեր տան ապահովութեան մասին Հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 10 տարուան մեր ընթացքէն. նաև Կենաց, Վիլաուրուելու ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըստանցեալ եմք. սար համար ալ օտարներու դիմելէ առաջ մեզի դիմեցէք. նամակներու պատասխանները մեր պնդիլական ուշադրութեանը կուտամք ինչպէս սովորութիւնէն:
ԶԳԵՍՏԱՎԱՃԱՌ. ԵՂՅԱՐԳ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ
52 Սաւոթ Հ Պրիւ. Փողոց Ուստր Մէս
3 տօլարի Ապրանք գնողաց ալ լուսանկարը մեծցնել կուտամք ձրի.

Բ Ա Տ Տ Ի Ի

«ԴԱԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Կ. Հատոր վերջաբանով և «ԿԱՅՄԵՐ» Բ. Հատոր լրակատար:
Իւրաքանչիւրի գաժանորդագրին է 5 Շիլին:
Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ԱՄՈՒՆԷԼ» եղաւ:

Րաֆֆիի միւս ներկերը ունենալ ցանկացողները պիտի ուղարկի դիմեն մեզ: Մեզից կարելի է ստանալ նաև Նորիմեան Հայրիկի, Մերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրեանքներ: Հասցէ:
MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՆ»,
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ
Տարեկան բաժնեգրին է՝ 10 Փրանք.
(2 Տօլար) Դիմել՝ Հետեւեալ Հասցէին:
A la Redaction de La Revue
«Hantess» Vienne (Autriche)
VI 1/2 Mechitharistengasse 4.

Ա. Ջ. Գ.

Պողոթ Տէր-Գէորգեան Նարբերգի իջմէ գիւղէն, Ապրիլ ամսոյն մէջ Փարիզ հիւանդանոց կը գտնուէր, իրեն կը զբրէնք Բեաթիպեանի Հասցէով. հիմայ ուր ըլլալը չենք գիտեր. տեղեկութիւն ունեցողէն կը խնդրենք որ իմացունել հաճի Ձայն Հայրենակցի միջոցաւ և շնորհակալ կըլլանք:
Գրիգոր Պոյաճեան
Փրոպիտենս (Ամերիկա)

Ա. Ջ. Գ.

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլուրի գործարանը: Սայն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուլուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններով տանտիկիներու և ճարտարանպետներու գնահատութեան արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ:

Ուստի ամեն ով որ կուգէ ընտիր և արիւրճահամ կերակուր լինելու պուլուր և ծեծած ունենալ թող դիմէ ուղարկի մեզ: Ապսպրանքներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Հետեւեալ Հասցէին:
Ուստրի, Պուլուրի Միացեալ Ընկ. 151 Իւնիոյն սթ., Ուսթըր Մասս.
Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք:

ԿԱՐԻՈՐ ԱՋԳ

Ճաշակի յարմար պատուական ապուրտ (Նայսերի Պատրմայ) կը պատրաստեմ, գրին է՝ փառնուրը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին է:
Տ. ՍԷՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS

ԱՆԱՀԻՏ

Հանգէս Աղապին, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրք. տարուայ Բաժանորդագրութիւնը:
Հասցէ
ԱՐՏԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
6 Place de L'odeon Paris



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

ՄԵՆՈՒՐԱԿԱՆ ԵՒ ՓՈՔՐԱՐԱՆԱԿ Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ
Նիւ-Եորք 509 2րդ. Ավինո
Տեղական և Արեւելեան բազմաթիւ սակ նպարեղէններ, լաւագոյն տեսակ ընդհանրներ, եղանակին համար անհրաժեշտներ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիր փառնուրը 12 սէնթ, մեծ քանակ գնողաց 10 սէնթ. Ուստրի պատուական Պղուր և Մեծածախ փառնուրը 4 սէնթ մեծաքանակ գնողաց 3 1/2:
Զիթապտուղ (զէյթուն) փառնուրը 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր գնով 25 կընեմ, 5 փառնուրը քէն սալայ համար 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատ: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ալ ղը դրամով եւսիք, ընտիր կորկոտ, անթալ հալիսի, կանտոն զէյթուն. Չէյթուն եալի (ընտիր տեսակէն) մաքուր լօքուս տեսակներով, ոսպ աղցուած կամ շաղցուած, սուճախ, սիսեռ Պօլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքարի տեսակներով, քիմիոն, անասն, պատուական խուճիկ. աղուր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն...: Նամակով եղած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով: Վճարու մեքը կանխիկ են ոչ պատուով:

Նաև կը ծախեմ Պամիս, Նայսերի Պատրմա և Մուճուր:

ԿԱՐԻՈՐ ԱՋԳ

Ճաշակի յարմար պատուական ապուրտ (Նայսերի Պատրմայ) կը պատրաստեմ, գրին է՝ փառնուրը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին է:
Տ. ՍԷՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS